# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի « Հովտամեջի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի ֆիզիկայի ուսուցչի /13 դասաժամ/ և ֆիզկուլտուրայի ուսուցչի /31 դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ Ն մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-Դիմում ( Ձև 1), մեկ լուսանկար 3*4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ ( դիպլոմ ),
-անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ( առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն ( Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ( առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հուլիսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $10^{00}$ -ից $15^{00}$ -ը, բացի հանգստյան օրերից: Մրցույթը կկայանա սույն թվականի հուլիսի 26-ին: